տակապետք։ Աստ գրեցաւ սա ի Թվիս Հայոց ՋԺԵ. (=1466), ձեռամբ մեղսաթաւալ և տխմար գծողիս. անպիտան Մանուէլի. ի խնդրոյ Աբրահամ քհյ.ի. հաւր վանից սբ. Յովհաննու Մկըրչին Լեռնակողմանն. ի պատճառս աղաւթից և ի մխիթարութիւն հոգւոց իւր ի յաղաւթել ի սբ. տնաւրինականքս Ք|ի. Ա.յ. մերոյ...» (ՄՋ. Թ. 1662)։ Մանուէլ գրիչ ունի նաև մաղթողական ոտանաւոր մը իր կողմէն յօրինած, որուն սկզբնատառերը կը յօդեն Մանուկ զմեղաւոր և որուն մէջ Վարդանի համար կը յիշուի թէ՝ կիլիկեցի էր։

Իսկ նոյն ձեռագիրին Բ. մասը՝ Եփրեմի, Մեսրոպ վարդ.ի Գրիգոր Լուսաւորչի աղօթքները՝ ինչպէս նաև Աղօթք ձգնաւորացը դարձեալ նոյն վանաց մէջ ընդօրինակուած է, ձեռամբ Սարգսի սպասաւորի սբ. Հրեշտակապետաց, ի յիշատակ և ի վայելումն սրբասէր կրօնաւորի, Աբրահամ աբեղային. սպասաւոր Յովհաննու Լեռնակողմանն.. Թվ. ՋԺԸ. (=1469) Մայիս ԺԵ»։

ՄԱՆՈՒԿԼ ՎՐԴ. — Մբ. կը վախճանի 1763 ին։

ՄԱՆՈՒԿԼ ՎՐԴ. — Մբ. կը միաբանակցէր 1769 ին։

ՄԱՆՈՒԿ ԱԲ. — Մբ. 1756 ին։ Իր անուան յիշատակ մատեանի մը կը գտնուի Ս. Յակոբի վանքին գանձատան մէջ. հետեւեալ արձանագրութիւնով. «Մատեանս ի վայելումն տէր Մանուկ աբեղային Թուին ՌՄԵ (=1756) (Յուց. պ.)։

ՄԱՆՈՒԿ ԱԲ. ՏՐԱՊԻԶՈՆՑԻ. — Մբ. 1693 ին կը յիշատակուի Մինաս Ամգեցիի Օրագրութեան մէջ։

ՄԱՆՈՒԿ (մհս.) ՍԱՄՈՒՐՋԻ ՄՍՐՈՒԹԵԱՆ, ՎԱՆԵՑԻ. — 1836 ին Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է Վանեցի Յակոբ գպիր Քանքանեանի Տօնացոյց և Լուսնացոյցը։ Այս ընդօրինակութիւնը ունի հետեւեալ յիշատակարանները. Ս. Առաջինն լուսնացոյց և երկրորդը տօնացոյց. յարմարեալ ուսումն Յակոբ գպրի ի զարմէն Քանքանեան կոչեցելոյ ի քաղաքին Վան կոչեցելոյ. վերստին պաղատիարեալ եղև ձեռամբ մեղսամերկ մահտեսի Մանուկէս Մարուքեան ի Ս. Երուսաղէմ. ի վայելումն մահտեսի Բարսեղին ի նորայ եղբօրորդի տիրացու մահտեսի Օհանէսին որ այժմուս է սպասաւոր Պօղոս գերբնտիր Պատրիարքի. ի հայրապետութեան... և ի դիտողութեան Վասպուրականի գաւառին Ղազար